ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 544-Հ/2 «18» փետրվարի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՇԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև 2025 թվականին անցկացվող բանակային խաղերի՝

1) կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,
2) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն № 2 հավելվածի,
3) ստուգողական կետի նկարագրի սյունակներում կիրառվող նշանների օրինակելի ձևը՝ համաձայն № 3 հավելվածի,
4) ժամանակացույցը՝ համաձայն № 4 հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2/18/2025

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի ***փետրվարի 18*** *-ի*
№544-Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ

1. ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև 2025 թվականին անցկացվող բանակային խաղերի (այսուհետ՝ Խաղեր) նպատակն է ռազմակիրառական մարզաձևերը մասսայականացնելը, ֆիզիկական պատրաստականության դերն ու նշանակությունը բարձրացնելը, ինչպես նաև կառույցների միջև մարզական առողջ մթնոլորտ ստեղծելը:

2. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2. Խաղերն անցկացվելու են 2025 թվականի հունիսի 29-ից հուլիսի 6-ը ընկած ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի և ՀՀ պաշտպանության նախարարության մարզաբազաներում:

3. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Խաղերի անցկացման ընդհանուր ղեկավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված կազմկոմիտեն (այսուհետ՝ Կազմկոմիտե):

4. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

4. Բանակային խաղերի ծրագրում ներառված են հետևյալ մրցաձևերը՝
1) ռազմականացված քառամարտ,
2) ռազմականացված կրոսավազք,
3) ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազք,
4) կողմնորոշում,
5) հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից,
6) հրաձգություն «ՊՄ» ատրճանակից,
7) հրաձգություն «ԴԴՀ» հրացանից:

5. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մրցումներին կարող են մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության 5 թիմ, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 4 թիմ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 1 թիմ, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 3 թիմ, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության 1 թիմ, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 1 թիմ, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 1 թիմ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 1 թիմ և Հայաստանի Հանրապետության դատախազության 1 թիմ:

6. Յուրաքանչյուր թիմի կազմը՝ մեկ ղեկավար, մեկ ներկայացուցիչ և 14 մասնակից (ըստ ստորև ներկայացված մարզաձևերի ու քանակների):

N	Մարզաձև	Մասնակիցների առավելագույն քանակ		
		Տղամարդ	Կին	Ընդամենը
1.	ռազմականացված քառամարտ	2	1	3
2.	ռազմականացված կրոսավազք	2	1	3
3.	Ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազք	2	1	3
4.	կողմնորոշում	1	1	2
5.	հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից	1	1	2
6.	հրաձգություն «ՊՄ» ատրճանակից	1	1	2
7.	հրաձգություն «ԴԴՀ» հրացանից	1	1	2

7. Թիմերում կարող են ընդգրկվել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը տվյալ կառույցում ծառայության (աշխատանքի) անցած զինծառայողները (աշխատակիցները): Բոլոր մասնակիցները ներկայանում են զինգրքույկներով, սպայական վկայականներով կամ անձը հաստատող փաստաթղթով և վերջին պաշտոնում նշանակման վերաբերյալ տեղեկանքով: **Վերջին 5 տարիների ընթացքում հրաձգության ՀՀ առաջնություններին մասնակցած աշխատակիցների մասնակցությունն արգելվում է**: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի հանդես գալ միայն 1 մրցաձևում: Ռազմականացված կրոսավազքի անհատական մրցապայքարի մասնակիցները (2 տղամարդ և 1 կին) ընդգրկվում են նաև ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազքում:

6. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Մրցումներին մասնակցելու համար նախնական հայտերը (հավելված №2) ներկայացվում են Կազմկոմիտե՝ մինչև 2025 հունիսի 21-ը, իսկ վերջնական հայտը՝ Խաղերի բացման արարողությանը նախորդող օրը:

7. ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

9. Խաղերի մրցավարությունն իրականացվում է գլխավոր մրցավարի, քարտուղարի, մրցավարների և դաշտային արբիտրների միջոցով:

10. Մրցավարական խորհուրդը կազմում ընդգկվում են մրցավարական խորհրդի նախագահը, քարտուղարը (գլխավոր մրցավար) և յուրաքանչյուր կառույցից մեկական թիմի ներկայացուցիչ: Մրցավարությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով մրցավարներին աջակցում են դաշտային արբիտրները, որոնք նշանակվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողներից:

11. Խաղերի ընթացքում բոլոր վիճելի հարցերը քննարկվում են մրցավարական խորհրդում: Որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության պարագայում ընդունվում է մրցավարական խորհրդի նախագահի կողմից քվեարկված որոշումը: Մրցավարական խորհրդի քարտուղարը քվեարկություններին չի մասնակցում:

12. Մրցավարական խորհրդի վերջնական որոշումը բողոքարկման ենթակա չէ:

8. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Բոլոր մարզաձևերում համազգեստը պետք է լինի զինվորական դաշտային (միանման, տվյալ կառույցի համար հաստատված նմուշի)՝ կիսաճտքավոր կոշիկներով:

14. Ձենքերը տրվում են կազմակերպչի կողմից՝ վիճակահանությամբ: Դրանց նշանազարկի բերումը իրականացվում է մրցման նախորդ օրը:

15. **Ռազմականացված քառամարտ:** Անցկացվում է N 2, նռնակի նետում նշանակետին վարժաձևը՝ № 4 համազգեստով (համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 14.04.2021թ. N 322 հրամանով հաստատված «ՀՀ ԶՈՒ ֆիզիկական պատրաստության հրահանգ»-ի հավելված № 6-ի): Մասնակիցների համար բոլոր վարժաձևերի հերթականությունը որոշվում է մեկ վիճակահանությամբ: Ռազմականացված քառամարտն իր մեջ ներառում է ձգումներ պտտաձողից (կանայք՝ իրանի ծալում և տարածում), վազք 100 մ, վազք 3000 մ (կանայք՝ 1000 մ) և նռնակի նետում նշանակետին մրցաձևերը: Մրցումներն անցկացվում են 2 օրում, առաջին օրը՝ ձգումներ (իրանի ծալում և տարածում), վազք 100 մ և նռնակի նետում նշանակետին, երկրորդ օրը՝ վազք 3000 մ (1000մ):

1) Ձգումներ: Ելման դրությունը՝ կախված վիճակ, բռնվածքը՝ վերևից, ձեռքերը՝ ուղղված, ֆիքսել առնվազն 1 վայրկյան: Ծալելով ձեռքերը՝ ձգվել (ծնոտը պտտաձողից բարձր): Ձգումը հաշվվում է, եթե կատարվել է ինքնուրույն, ուղղված ոտքերով, առանց թափային շարժումների, իսկ իջնելուց ձեռքերը լրիվ ուղղված են: Մարմնի ճոճումը վարժության կատարման ժամանակ սխալ չի հաշվվում, եթե ոտնաթաթերը ամբողջությամբ չեն հատել պտտաձողի սյուների առանցքը: Չի թույլատրվում ճոճումը կանգնեցնելու նպատակով օգնություն ցուցաբերել և ծնոտով հենվել պտտաձողին: Յուրաքանչյուր ձգում կատարվում է բոլոր շարժումների դադարումից հետո, ինչն ազդարարվում է մրցավարի հրահանգով: Տեղերը որոշվում են կրկնությունների առավելագույն քանակով: Հավասար

արդյունքների դեպքում մասնակիցներին տրվում է նույն տեղը, իսկ հաջորդ տեղը բաց է թողնվում:

2) Իրանի ծալում և տարածում: Ելման դրությունը՝ պառկած մեջքին, ձեռքերը՝ գլխի հետևում (ծոծրակին)՝ ոտքերն ամրացված: Ձեռքերը գլխի հետևում՝ իրանը բարձրացնել առաջ՝ արմունկներով դիպչել ծնկներին (թույլատրվում է ծնկների աննշան ծալում): Ելման դիրք վերադառնալիս անհրաժեշտ է թիակներով դիպչել հատակին: Կատարվում է 2 րոպեի ընթացքում: Տեղերը որոշվում են կրկնությունների առավելագույն քանակով: Հավասար արդյունքների դեպքում մասնակիցներին տրվում է նույն տեղը, իսկ հաջորդ տեղը բաց է թողնվում:

3) Վազք (100 մ): Մեկնարկը՝ կանգնած վիճակից: Անցկացվում է մարզադաշտի վազքուղու կամ հարթ՝ վազքի համար հարմարեցված տարածության վրա: Մրցավարի ազդանշանից շուտ մեկնարկած մասնակիցն առաջին անգամ զգուշացվում է, երկրորդ անգամ՝ հանվում հետագա մրցապայքարից: Յուրաքանչյուր մասնակից վազում է իր վազքուղով և, եթե դուրս է գալիս սահմաններից ու խանգարում մյուս մասնակցին, ապա հանվում է մրցապայքարից, իսկ տուժած մասնակցին թույլատրվում է մեկնարկել վերջում (առնվազն 2 րոպե դադարից հետո): Ժամանակը կանգնեցվում է, երբ մասնակիցը իրանի որևէ մասով հատում է վերջնագիծը:

4) Վազք 3000 մ (1000 մ): Մեկնարկը՝ կանգնած վիճակից: Անցկացվում է մարզադաշտի վազքուղու կամ հարթ՝ վազքի համար հարմարեցված տարածության վրա: Մրցավարի ազդանշանից շուտ մեկնարկած մասնակիցն առաջին անգամ զգուշացվում է, երկրորդ անգամ՝ հանվում հետագա պայքարից:

Վազքային վարժություններում հաղթողը որոշվում է նվազագույն ժամանակով: Հավասար արդյունքների դեպքում մասնակիցներին տրվում է նույն տեղը, իսկ հաջորդ տեղը բաց է թողնվում: Ժամանակը հաշվարկվում է հարյուրերորդական ցուցիչով:

5) Նռնակի նետում նշանակետին: Նետումը կատարվում է ուսումնական «Ֆ-1» նռնակով (600գ, առանց լծակի): Նռնակը մասնակցին է տրվում նետման վայրում, մրցավարական խորհրդի կողմից: Թույլատրվում է արձակել օձիքը և թուլացնել գոտին: Նետումները տղաների համար կատարվում են 20 մ, 25 մ, 30 մ և 35 մ, աղջիկների համար՝ 15 մ, 20 մ, 25 մ և 30 մ հեռավորությունների վրա տեղակայված 4 նշանակետերի վրա (նկ, 1):



Նկ. 1. Նշանակետերի գծագիրը

16. Յուրաքանչյուր նշանակետ իրենից ներկայացնում է գետնին նշագծված ընդհանուր կենտրոն ունեցող, 2 մ և 4 մ տրամագծերով հորիզոնական շրջաններ, որոնց կենտրոնում տեղադրված է 20-30 սմ բարձրությամբ տարբերվող գույնի դրոշակ: Նետումը

կատարվում է նետման հարթակից, որն իրենից ներկայացնում է 2 մ լայնությամբ և 3 մ երկարությամբ թափավազքի համար նախատեսված վազքուղի, որն ավարտվում է 1,25 մ բարձրությամբ պատով:

Շրջանների հեռավորությունը չափվում է վազքուղին ավարտող պատի ներսից՝ չափման կետից (նկ. 2):



Նկ. 2.Նետման հարթակ:

17. Յուրաքանչյուր նշանակետի ուղղությամբ կատարվում է 4 նետում: Ամբողջ վարժությունը կատարելու համար տրվում է 3 րոպե ժամանակ և 16 նռնակ: Մրցավարի ազդանշանից շուտ նետելու դեպքում մասնակցի հաշվին գրանցվում է 20 մ հեռավորության նշանակետի անհաջող փորձ, իսկ մրցավարի ազդանշանից հետո կատարված նետումները գրանցվում է որպես 35 մ հեռավորության նշանակետի անհաջող փորձ: Նետումները կատարվում են հաջորդաբար՝ չորսական նռնակ 20 մ (կանանց համար 15 մ), ապա՝ 25 մ (կանանց համար 20 մ), որից հետո՝ 30 մ (կանանց համար 25 մ) և 35 մ (կանանց համար 30 մ) հեռավորությամբ նշանակետին: Նետման արդյունքը գրանցվում է նռնակի նետման դաշտի հետ առաջին հպմամբ: Գլորվելով կամ կրկնակի ցատկով նշանակետի խոցումը չի գրանցվում: Ներքին շրջանակի տարածքը համարվում է 2 մ տրամագծով նշագծված շրջանը՝ նշագիծը ներառյալ, արտաքին շրջանի տարածքը համարվում է 4 մ տրամագծով նշագծված շրջանը՝ նշագիծը ներառյալ: Մրցավարը յուրաքանչյուր նետումից անմիջապես հետո ցույց է տալիս նետման արդյունքը՝ դրոշակն ուղղահայաց պահելով վերև՝ ներքին շրջանակի խոցման համար, դրոշը հորիզոնական պահելով կողք՝ արտաքին շրջանակի խոցման համար, և դրոշակը աջից ձախ թափահարելով՝ անհաջող փորձի համար: Նետման ժամանակ թույլատրվում է դիպչել պատին:

Նշանակետ		Միավորներ	
Արական սեռ	Իգական սեռ	Ներքին շրջանակ	Արտաքին շրջանակ
N 1 (20մ)	N 1 (15մ)	7	3
N 1 (25մ)	N 1 (20մ)	8	4
N 1 (30մ)	N 1 (25մ)	9	5
N 1 (35մ)	N 1 (30մ)	10	6

18. «Նռնակի նետում նշանակետին» մրցաձևում հաղթող է ճանաչվում ավելի շատ միավորներ վաստակած մասնակիցը: Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է ավելի շատ մեծ միավորներ խոցած մասնակցին:

19. Ռազմականացված քառամարտի մասնակիցների անհատական հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր մասնակցի զբաղեցրած տեղերի նվազագույն հանրագումարով:

20. Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է առավել շատ առաջին տեղեր գրաված մասնակիցներին, հավասարության դեպքում՝ երկրորդ, ապա՝ երրորդ տեղերը:

21. Եթե վերոհիշյալ պայմանները նույնպես հավասար են՝ առավելությունը տրվում է հաջորդաբար՝ 3000 մ (1000 մ) վազքից, նռնակի նետում նշանակետից, ձգումներ (իրանի ծալում և տարածում), ապա՝ 100 մ վազքից ավելի բարձր տեղ գրաված մասնակցին:

22. **Ռազմականացված կրոսավազք**: Ռազմականացված կրոսավազքի անհատական մրցապայքարին մասնակցում են յուրաքանչյուր թիմից 2 տղամարդ և 1 կին, մեկնարկը տրվում է տղամարդկանց և կանանց համար առանձին: Համազգեստը դաշտային՝ գլխարկով, ինքնաձիգով և 1 պահեստատուփով: Մասնակիցը մեկնարկին մոտենում է հաստատված մեկնարկային ժամանակից առնվազն 1 րոպե առաջ: Մրցավարը ստուգում է հանդերձանքը, զենքը և զինամթերքի բացակայությունը: Չի թույլատրվում զենքի վրա որևէ կառուցվածքային ձևափոխություն, այդ թվում նշանառության սարքավորումների, ձգանի, հարվածաձգանային մեխանիզմի, կոթի և այլ մասերի չափերի և ձևերի փոփոխություններ:

23. Մեկնարկն ու վերջնագիծը տեղադրվում են նույն տեղում: Հրաձգության վայրը (հրաձգարանը) կազմակերպում է վազքուղու մեկնարկից 1-1,2 կմ (կին զինծառայողների համար 0,5-0,7 կմ) հեռավորության վրա: Մեկնարկը տրվում է անհատական՝ 1-2 րոպե ընդմիջմամբ: Մեկնարկի հերթականությունը որոշվում է վիճակահանությամբ: Թիմակիցների մեկնարկը իրար հետևից չի թույլատրվում: Մեկնարկելիս ինքնաձիգը պետք է դրված լինի ապահովիչին (կին զինծառայողները մեկնարկում են առանց ինքնաձիգի): Մեկնարկելով՝ մասնակիցը հետիոտն կարգով հաղթահարում է 4 ուսումնական կետերն, ըստ հետևյալ հերթականության՝ նռնակի նետում նշանակետին, հրաձգություն, նռնակի նետում հեռավորության վրա, դանակի նետում նշանակետին:

24. Նշանակետին նռնակի նետումը իրականացվում է 30մ (կին զինծառայողների համար 25մ) հեռավորության վրա 4մ տրամագծով գետնին նշագծված հորիզոնական շրջանագծի տեսքով նշանակետին: Նետումը համարվում է խոցված, եթե նռնակը առաջին հպմամբ դիպչել է նշանակետին: Գլորվելով կամ կրկնակի ցատկով նշանակետի խոցումը չի գրանցվում: Գծի լայնությունը մտնում է նշանակետի չափերի մեջ: Նետման համար տրվում է առավելագույնը 3 փորձ՝ մինչև առաջին արդյունավետ նետումը:

25. Մասնակիցները փամփուշտները (կին զինծառայողները՝ նաև ինքնաձիգերը) ստանում են կրակային բնագծում, լիցքավորում և պատրաստվում կրակելուն: Մինչև մասնակիցը փամփուշտներով լիցքավորում է պահեստատուփը, մրցավարը նրան հայտնում է այն թիրախի համարը, որին պետք է արձակվի կրակը, որի ուղղությամբ պետք վարվի հրաձգությունը: Վերջինս կրակում է պատրաստ լինելուն պես՝ առանց մրցավարի հրամանի: Մասնակիցները կրակում են իրենց կցված ինքնաձիգից՝ պառկած դիրքից, երեք կրակոց, մինչև թիրախի առաջին խոցումը: Հրաձգությունը իրականացվում է ընկնող N 8 թիրախին (համաձայն' Հայաստանի Հանրապետության ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 02.04.2020թ. N 300 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության ԶՈՒ հրաձգության

դասընթաց» ձեռնարկ), հեռավորություն՝ 300մ: Կրակելու ժամանակ թույլատրվում է օգտագործել ինքնաձիգի փոկը՝ պահեստատուփով հենելով գետնին: Մասնակիցը զենքով բոլոր գործողությունները կատարում է ինքնուրյուն: Անսարքությունների վերացման համար, մրցավարի թույլտվությամբ, նա կարող է օգտվել զենքի վարպետի կամ մրցավարի օգնությունից: Եթե մասնակիցը մենահատ կրակոցի փոխարեն կրակել է կրակահերթով, կրակը նույնպես համարվում է կատարված: Պահեստատուփը 3 փամփուշտից ավելի լիցքավորելու համար մասնակից հեռացվում է մրցումներից: Չի թույլատրվում կրակել մրցակցի թիրախին, կրակելու դեպքում թիրախը նորից բարձրացվում է կրակելու համար, իսկ կորցրած ժամանակը ֆիքսվում և հանվում է վերջնական արդյունքից: Եթե թիրախն առանց կրակելու իջնում է, ապա մրցավարն օպերատորին այն նորից բարձրացնելու հրահանգ է տալիս, և մասնակիցը շարունակում է կրակել, սակայն կորցրած ժամանակը հանվում է մասնակցի վերջնական արդյունքից: Հրաձգությունից հետո մասնակիցը լիցքաթափում է զենքը և մնում է պառկած դիրքում՝ մինչև մրցավարը ստուգում է զենքը և համոզվում փամփուշտների բացակայության մեջ ու վազքը շարունակելու հրահանգ է տալիս: Բոլոր մասնակիցները շարունակում են վազքը ինքնաձիգով:

26. Հեռավորության վրա նռնակ նետելու համար կրակային բնագծից 300-600մ հեռավորության վրա պատրաստվում են 10մ լայնքով և 40մ երկարությամբ միջանցքներ: «Ֆ-1» նռնակները (նմանակումները) դրվում են նետումը կատարելու վայրում: Մասնակիցը գրավում է ցանկացած ազատ միջանցք և հերթականությամբ տեղից կամ թափավազքից նետում է 3 նռնակ՝ մինչև 40 մետր (կանանց համար 30 մետր) հեռավորության հաղթահարումը, որից հետո մրցավարի հրահանգով շարունակում է վազքը: Նետման համար տրվում է առավելագույնը 3 փորձ՝ մինչև առաջին արդյունավետ նետումը: Նետումները կատարում են ինքնաձիգը ձեռքին կամ մեջքին դրությունից:

27. Դանակի նետումն իրականացվում է 5մ հեռավորությունից, գետնից 90-110 սմ բարձրության վրա 90x60սմ չափսով ստենդի վրա պատկերված մարդու գոտկային ուրվագծին, որի գլխի տրամագիծը կազմում է 22 սմ կրծքավանդակի լայնությունն ու բարձրությունը 45 սմ, իսկ պարանոցային մասը՝ 12x12սմ: Թիրախը համարվում է խոցված, եթե դանակը խոցում և մնում է ուրվագծի սահմաններում սայրով: Նետման համար տրվում է 3 փորձ: Նետման դանակները տրամադրվում են կազմակերպչի կողմից և բոլորի համար նույնն են:

28. Հրաձգության ժամանակ թիրախը չխոցելու, 30 մետրից (կանանց համար 25մ) պակաս նռնակի նետման համար մասնակիցը ստանում է 50-ական, իսկ նռնակով նշանակետը չխոցելու կամ հեռավորություն նետելիս 30-ից մինչև 40 մետր (կանանց համար՝ 25-30) նետման համար՝ 30 տուգանային վայրկյան: Դանակի նետման ժամանակ յուրաքանչյուր անհաջող նետման համար տրվում է 20 տուգանային վայրկյան, իսկ նետման ստենդին չդիպչելու յուրաքանչյուր փորձի համար՝ 30 տուգանային վայրկյան:

29. Ժամանակը հաշվարկվում է հարյուրերորդական ցուցիչով: Ռազմականացված կրոսավազքում տեղերը որոշվում են լավագույն արդյունքներով, տղամարդկանց և կանանց համար առանձին հաշվարկով: Հավասար արդյունքի դեպքում առավելությունը տրվում է ավելի քիչ տուգանային վայրկյան ստացած մասնակցին: Կրկին հավասարության պարագայում առավելությունը տրվում է ավելի շուտ մեկնարկած մասնակցին:

30. **Ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազք:** Դաշտի կահավորումը, հանդերձանքն ու մրցավարական կազմը նույնն է, ինչ կրոսավազքի անհատական մրցույթի ժամանակ:

31. Թիմը կազմվում է կրոսավազքին մասնակցած 2 տղամարդ և 1 կին մասնակիցներով: Մեկնարկը տրվում է խմբակային՝ երկու խմբով: Խմբերի մեկնարկի տարբերությունը պետք է լինի առավելագույնը 1 ժամ: Թիմերն ըստ խմբերի բաժանվում են վիճակահանությամբ: Բոլոր թիմերում 1-ին վազքահերթն իրականացնում են կանայք:

32. Նոնակների և դանակի նետումների ու հրաձգության համար տրվում է մեկական փորձ, որոնցից յուրաքանչյուրի ձախողման համար ստանում է տուգանային 100մ տղամարդկանց և 100մ կանանց վազքի շրջան:

33. Փոխանցումավազքի հերթափոխը կատարվում է վազող մասնակցի կողմից վերջնագիծն ամբողջությամբ հատելուց հետո՝ ավտոմատի փոխանցմամբ: Պահանջվող տուգանային շրջանը չհաղթահարած մասնակցի թիմը հանվում է հետագա պայքարից և թիմը գրավում է վերջին տեղը: Թիմերի տեղերը որոշվում են վերջին մասնակիցների կողմից վերջնագիծը հատելու ժամանակով:

34. **Կողմնորոշում:** Յուրաքանչյուր մասնակցի տրվում է կրծքահամար, որը պետք է լավ տեսանելի լինի և կրվի կազմակերպիչների սահմանած կանոններով: Կրծքահամարները չի թույլատրվում պոկել կամ պահել: Կողմնորոշման համար մասնակիցները կարող են օգտվել միայն մրցավարների կողմից տրված քարտեզից, ստուգողական կետերի նկարագրերից, ստուգողական կետերի գրանցման քարտից կամ սարքավորումից և մասնակցի անձնական ոչ էլեկտրոնային կողմնացույցից:

35. Մրցումների վայրում հեռահաղորդակցման սարքավորումներ թույլատրվում է օգտագործել միայն կազմակերպիչների թույլտվությամբ:

36. **Մեկնարկը** տրվում է առանձին՝ 2-3 րոպե ընդմիջումներով: Մեկնարկի հերթականությունը որոշվում է վիճակահանությամբ: Բոլոր մասնակիցները մեկնարկային տարածքում առնվազն 20 րոպե նախապատրաստվելու և նախավարժանք կատարելու հնարավորություն պետք է ունենան: Այդ տարածք մուտք գործելու իրավունք ունեն միայն չմեկնարկած մասնակիցները և թիմի ներկայացուցիչը: Կետը, որտեղից պետք է սկսվի կողմնորոշումը, նշվում է քարտեզի վրա՝ մեկնարկային եռանկյունու տեսքով:

37. **Մեկնարկից** ուշացած մասնակցին թույլատրվում է մեկնարկել, սակայն նրա մեկնարկը հաշվարկվում է նախատեսված ժամանակից: Կազմակերպիչները ժամանակը պետք է այնպես հաշվարկեն, որ նրա մեկնարկը չխանգարի հաջորդ մասնակիցներին: Եթե կազմակերպիչների պատճառով մասնակիցն ուշանում է մեկնարկից, ապա նրան տրվում է նոր մեկնարկի հնարավորություն:

38. **Վերջնագիծը** հատելուց անմիջապես հետո մասնակիցը հանձնում է ստուգողական կետերի գրանցման քարտը (էլեկտրոնային կրիչը) և քարտեզը: Վերջնագիծը քարտեզում նշվում է երկու միմյանց մեջ գծված 5 և 7 մմ չափերի շրջաններով:

39. Ստուգողական կետերի (ՍԿ) գրանցման քարտը (էլեկտրոնային կրիչը) կորցրած, ստուգողական կետը բաց թողած կամ ստուգողական կետերի հերթականությունը խախտած մասնակիցները որակազրկվում են: Վազքն ավարտած մասնակցին արգելվում է որևէ

ազդեցություն ունենալ մրցման ընթացքի վրա կամ օգնել այլ մասնակիցների: Այս կանոնը խախտած մասնակիցը հեռացվում է մրցումներից:

40. Մրցումների նախօրյակին կազմակերպիչները մասնակիցների համար նախապատրաստում են մրցման նմուշօրինակ, որով մասնակիցներին հնարավորություն է տրվում ծանոթանալ տեղանքի, նշված երթուղիների և նշանների ձևերին, քարտեզների օրինակներին, ՍԿ-ներին:

41. Կազմակերպիչների կողմից պետք է ապահովվի տեղանքի անվտանգությունը, պետք է բացառվի վտանգավոր օբյեկտների, կիրճերի, ճահիճների և այլ վտանգ ներկայացնող գործոնների առկայությունը: Տեղանքը մասնակիցների համար հայտնի դառնալուց հետո պետք է արգելափակել և բացառել մասնակիցների ու նրանց ներկայացուցիչների մուտքն այնտեղ: Այդ պահից տեղանք մուտք գործելու իրավունք են ունենում միայն կազմակերպիչները:

42. Քարտեզի մասշտաբը պետք է լինի 1:10000: Քարտեզները հնարավորին չափով պետք է պահպանված լինեն փոշուց և վնասվելուց: Քարտեզը մասնակցին տրվում է անմիջապես մեկնարկին:

43. Վազքուղին պետք է ընտրվի այնպես, որ մասնակիցներն այն հաղթահարելու համար դրսևորեն իրենց՝ տեղանքում կողմնորոշվելու ու կենտրոնանալու ունակությունները, դիմացկունությունն ու ռազմակիրառական որակները: Վտանգավոր տարածքների, արգելված ճանապարհների և այլ արգելված վայրերի մասին թիմերի ներկայացուցիչները պետք է նախօրոք տեղեկացվեն: Դրանք պետք է նշվեն քարտեզներում և հնարավորության դեպքում՝ հենց տեղանքում: Մասնակիցներին չի թույլատրվում մտնել կամ հատել նման վայրերն ու ճանապարհները:

44. Եթե վազքուղին անհնար է կազմել առանց նման վայր կամ ճանապարհ հատելու, ապա դրանց հատման սահմանները հստակ պետք է նշվեն քարտեզում և տեղանքում, իսկ մասնակիցներն այդ տարածքները պետք է պարտադիր անցնեն նշված ուղիներով: Վազքուղու երկարություն է համարվում մեկնարկից մինչև վերջնագիծ ուղիղ գիծը, որն անցնում է ՍԿ-ների միջով: Վազքուղու երկարությունը պետք է կազմի 3-6 կմ:

45. Ստուգողական կետը 3 քառանկյուն դրոշակներից (30x30սմ) կազմված եռանկյունի է, որը տեղադրվում է գետնից 50-80 սմ բարձրության վրա (նկ. 3): Ստուգողական կետում պետք է առկա լինի ստուգողական կետի կոդը և այն անցնելու մասին նշում կատարելու սարքը՝ հսկման համակարգը (էլեկտրոնային համակարգ, կնիք, դակիչ, գունավոր մատիտ կամ այլ միջոց): Տեղանքում անհրաժեշտ է տեղադրել 5-8 ստուգողական կետեր, այնպես, որ միջին հեռավորությունը յուրաքանչյուրից կազմի առնվազն 200 մ: Ստուգողական կետը նշվում է քարտեզի վրա 7 մմ տրամագծով շրջանով՝ կենտրոնում կետ, իսկ կողքը՝ հերթական համարը:

Նկ. 3. Ստուգողական կետի կահավորումը:

46. Ստուգողական կետերի նկարագիրը քարտ է, որտեղ աղյուսակի միջոցով հատուկ նշաններով և գրառումներով նկարագրվում է հերթական ստուգողական կետը: Հարմարության համար ՍԿ-ի նկարագիրը տպվում է քարտեզի դիմային երեսի վրա: ՍԿ-ի նկարագրում նշվում են մրցման անվանումը, ընդհանուր վազքուղու երկարությունը և ՍԿ-ների նկարագրություններն՝ աղյուսակով (նկ. 4):

Միջոցառման անվանումը				Վազքուղու ամենակարճ երկարությունը			
				5.4 կմ			
A	B	C	D	E	F	G	H
1	68						
2	36						
3	74						
4	81						
							

Նկ. 4. Ստուգողական կետի նկարագիրը

47. Աղյուսակը կամված է լատիներեն տառերով նշված 8 սյունակից, որոնցից յուրաքանչյուրն ունի նկարագրության հատուկ նշանակություն.

A-ն՝ ՍԿ-ի հերթական համարն է,

B-ն՝ ՍԿ-ի կոդն է (նշված է ՍԿ-ի վրա),

C-ն՝ նմանատիպ նկարագրված առարկաներից որն է,

D-ն՝ նկարագրված առարկան է,

E-ն՝ նկարագրված առարկայի մանրամասնություններն են,

F-ը՝ նկարագրված առարկայի չափն է,

G-ն՝ նկարագրված առարկայի որ մասում է գտնվում ՍԿ-ն (դրոշակը),

H-ը՝ հավելյալ տեղեկություններն են:

Հավելված N 4-ում ներկայացված են ստուգողական կետի նկարագրի սյունակներում կիրառվող նշանների օրինակելի ձևը Ժամանակը կանգնեցվում է, երբ մասնակցի իրանը

հատում է վերջնագիծը, իսկ էլեկտրոնային համակարգ կիրառելիս՝ վերջնագծում էլեկտրոնային կրիչով գրանցվելու դեպքում:

48. Ժամանակը հաշվարկվում է վայրկյանների ճշտությամբ: Ստուգողական կետերը գտնելու համար մասնակիցներին տրվում է առավելագույնը 120 րոպե:

49. Կողմնորոշման մրցաձևի մասնակիցների տեղերը որոշվում են լավագույն արդյունքներով, իսկ հավասար արդյունքի պարագայում՝ առավելությունը տրվում է ավելի շուտ մեկնարկած մասնակցին:

50. **Հրաձգություն**: Զենքի նորմալ նշանազարկի բերումը և ստուգողական հրաձգությունը կատարվում է նախորդ օրը: Նորմալ մարտի ստուգման և նշանազարկի բերման համար յուրաքանչյուր մասնակցին տրամադրվում է 12 փամփուշտ երկու կրակահերթի համար՝ յուրաքանչյուրը՝ 6 փամփուշտով: Հաշվարկային կրակոցները կատարվում են միայն նոր թիրախներին:

1) Մասնակիցը զենքով բոլոր գործողությունները կատարում է ինքնուրույն: Անսարքությունների վերացման համար, մրցավարի թույլտվությամբ, նա կարող է օգտվել զենքի վարպետի կամ մրցավարի օգնությունից:

2) Չի թույլատրվում զենքի վրա որևէ կառուցվածքային ձևափոխություն, այդ թվում՝ նշանառության սարքավորումների, ձգանի, հարվածաձգանային կառուցվածքի, կոթի և այլ մասերի չափերի և ձևերի փոփոխություններ:

3) Մրցավարը մասնակիցներին հայտնում է այն թիրախի համարը, որին պետք է կրակի մասնակիցը: Վերջինս կրակում է միայն մրցավարի «Կրակ» ազդանշանից հետո՝ պատրաստ լինելուն պես: Մրցավարի ազդանշանից շուտ կրակոց կատարած մասնակիցն անմիջապես հեռացվում է հետագա մրցապայքարից:

4) Հրաձգությունն ավարտելուն պես մասնակիցը անջատում է պահեստատուփը, ստուգում է փամփշտանոցը, հրահանն իջեցնում մարտական ոտքից և դնում է ապահովիչին, մրցավարը ստուգում է զենքը և թույլ տալիս դուրս գալ կրակային դիրքից:

5) Հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը, հավասար միավորների դեպքում՝ առավելությունը տրվում է ավելի շատ մեծ միավորներ խոցած մասնակցին, կրկին հավասարության դեպքում՝ առավելությունը տրվում է թիրախի կենտրոնին առավել մոտ խոցում ունեցողին:

51. **Հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից:**

1) Հրաձգությունը վարվում է մենահատ կրակոցով, 100մ հեռավորությունից, N 4 կրծքային թիրախի վրա (համաձայն ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 20.04.2020 թ. N 300 հրամանով հաստատված «Հրաձգության դասընթաց» ձեռնարկի), 3 դրությունից՝ պառկած, ծնկած և կանգնած (առանց հենման կետի): Եթե մասնակիցը մենահատ կրակոցի փոխարեն կրակել է կրակահերթով, կրակը նույնպես համարվում է կատարված:

2) Ընդհանուր հրաձգության համար տրվում է 3 փորձնական և յուրաքանչյուր դիրքի համար 10 հաշվարկային կրակոցի հնարավորություն: Հրաձգության ժամանակ թույլատրվում է օգտվել ինքնաձիգի փոկից՝ առանց այն ինքնաձիգից արձակելու: **Չի թույլատրվում փամփշտատուփը հենել գետնին, ծնկի տակ որևէ իր դնել, որպես հենարան օգտագործել հանդերձանքը կամ այլ միջոցներ:** Փորձնական հրաձգության համար հատկացվում է 3 րոպե, իսկ հաշվարկային հրաձգությանը՝ 50 վայրկյան՝ պառկած,

60 վայրկյան՝ ծնկած և 70 վայրկյան՝ կանգնած դիրքերի համար: Կրակային դիրքի փոփոխության համար տրվում է 15 վայրկյան ժամանակ:

52. **Հրաձգություն «ԴԴՀ» հրացանից:** Վարժությունը կատարվում է պառկած դիրքից՝ հենարանից, 500մ հեռավորությունից, N 4 կրծքային թիրախի վրա (համաձայն ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 20.04.2020թ N 300 հրամանով հաստատված «Հրաձգության դասընթաց» ձեռնարկի): Թույլատրվում է 5 փորձնական և 20 հաշվարկային կրակոց: Ժամանակը՝ փորձնականի համար՝ 5 րոպե, հաշվարկայինի համար՝ 15 րոպե:

53. **Հրաձգություն «Մակարով» ատրճանակից:** Վարժությունը կատարվում է բացօթյա հրաձգարանում՝ 25մ հեռավորությունից, N4 կրծքային թիրախի վրա: Տրվում է 5 փորձնական և 15 հաշվարկային կրակոց (3 փուլ, յուրաքանչյուրը՝ 5 կրակոց): Ժամանակը՝ փորձնականի համար՝ 5 րոպե, հաշվարկայինի համար՝ յուրաքանչյուր փուլում 2 րոպե:

9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՈՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

54. Թիմային հաշվարկը կատարվում է թիմի բոլոր մասնակիցների և ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազքից թիմի գրաված տեղերի նվազագույն գումարով: Թիմի կողմից որևէ մրցմանը մասնակից չներկայացնելու պարագայում գրանցվում է վերջին տեղը: Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է առավել շատ առաջին տեղեր գրաված թիմին, հավասարության դեպքում՝ երկրորդ, ապա՝ երրորդ տեղերը և այլն:

10. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

55. Թիմերի ներկայացուցիչներն մրցավարական խորհուրդ բողոքարկելու իրավունք ունեն տվյալ մրցման ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում՝ գրավոր:

11. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

56. Ռազմականացված քառամարտ, ռազմականացված կրոսավազք, կողմնորոշում, հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից, հրաձգություն «ՊՄ» ատրճանակից, հրաձգություն «ԴԴՀ» հրացանից մրցաձևերում ընդհանուր հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) կպարգևատրվեն համապատասխան կարգի հավաստագրերով, մեդալներով և դրամական պարգևավճարով՝ 1-ին տեղ՝ 1 000 000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500 000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 300 000 ՀՀ դրամ, իսկ 1-ին տեղ գրաված թիմը՝ գավաթով:

57. Ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազքի մրցանակակիր թիմի անդամները կպարգևատրվեն՝ մեդալներով, պատվոգրերով և դրամական պարգևավճարով՝ 1-ին տեղ՝ 300 000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 200 000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 150 000 ՀՀ դրամ:

58. Իրավապահ մարմինների միջև թիմային հաշվարկի արդյունքում մրցանակային տեղեր գրաված թիմերը կպարգևատրվեն՝ համապատասխան կարգի հավաստագրերով և գավաթով:

12. ԾԱԽՍԵՐԸ

59. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մասնակից թիմերի և մրցավարների՝ կեցություն (գիշերակաց, սնունդ), մրցավարներին՝ պարգևավճար, մարզաշապիկ, գլխարկ, ճանապարհածախս, մրցանակակիրներին՝ դրամական մրցանակներ՝ համաձայն սույն կանոնակարգի 56-րդ և 57-րդ կետերով նախատեսված սահմանաչափերի՝ հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները չներառված, գավաթներ: Հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, ձայնային տեխնիկայի վարձակալում, լուսային տեխնիկայի վարձակալում, ուղիղ եթերի ապահովում, շարժական բեմի և Լեդ էկրանի ապահովում, հաղորդավարի ծառայություն, տարածքի ձևավորում, նկարահանում, տեսահոլովակի պատրաստում, կաշվե թղթապանակների, ծաղկեփնջերի, տպագրական նյութերի, մրցաշարի մասնակիցների մասնակցության համարների, դրոշների ձեռքբերման, մարզագույքը տեղափոխելու համար բեռնատար ավտոմեքենաների և գրենական պիտույքների ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

60. Զենքերը, զինամթերքը, մրցումների վայրեր տեղափոխման տրանսպորտը, մարզաբազան, հրաձգարանները, մեդալները և պատվոգրերը ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը: ՊՄ տեսակի ատրճանակները՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը:

61. Մասնակիցների գործուղման ծախսերը (ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի ***փետրվարի 18*** *-ի*
№544-Ա/2 հրամանի

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Համապատասխան ոլորտները համակարգող տեղակալ
_____
«_____» _____2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՄԱՐԶԱՁԵՎԸ _____

N	Կոչումը	Անունը, ազգանունը, հայրանունը	Բժշկի կնիքը և ստորագրությունը
1			Պրակտիկ առողջ են
2			

ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

Հավելված № 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի ***փետրվարի 18*** *-ի*
№544-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՇԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

		C	D	E	F	G	H
							
2	48						
3	82						
4	14						
5	73						
6	24						
7	19						
8	53						



Վերջին ՍԿ-ից վերջնագիծ 350մ

Քարտեզ	Տեղանք	ՍԿ նկարագրություն	Բացատրություն
		1	Տեռասսա
		2	Տեռասսա, արևմտյան մաս
		3	Եղուստ
		4	Եղուստ, վերին մասում
		5	Եղուստ
		6	Խորշ
		7	Խորշի վերին մաս
		8	Խորշի իջվածք

Քարտեզ	Տեղանք	ՍԿ նկարագրություն	Բացատրություն
		9	Արևելքի խորշ
		10	Հողային լիծքի ստորին մասում
		11 5x5	Բաց քարհանք 5x5մ
		12	Բաց քարհանքի արևելյան ծայրում
		13	Բաց քարհանքի արևելյան մասում
		14	Հողե պատի արևելյան ծայրամասում
		15	Ձորակի ստորին մասում
		16	Փոքրիկ ձորակի հյուսիս արևելյան մասում
		17	Բլուր

Քարտեզ	Տեղանք	ՍԿ Նկարագրություն	Բացատրություն
		18	Բլուր, հյուսիս-արևմտյան մասում
		19	Բլուրների միջև
		20	Բլրի և թմբի միջև
		21 1.0	Թումբ 1մ բարձրությամբ
		22 1.0	1մ բարձրությամբ թմբի ստորին արևելյան մասում
		23	Թամբաձև լանջ
		24	Փոս
		25	Փոսի արևելյան մասում
		26	Մեջտեղի փոսիկի արևելյան ծայրամասում
		27	Գոգի (փոսիկի) արևմտյան ծայրամասում

Քարտեզ	Տեղանք	ՍԿ նկարագրություն	Բացատրություն
		28	Միջնանոց
		29	Քարափ
		30	Քարափի հյուսիսային ստորոտում
		31	Վերին քարափ
		32	Քարափի վերին մասում
		33	Քարափների միջև
		34	Ժայռասյան հարավային ստորին մասում
		35	Քարանձավ
		36	Քարի արևմտյան մասում

Հավելված № 4
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի
*2025 թվականի **փետրվարի 18** -ի*
№544-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ

Կիրակի	**Երկուշաբթի**	**Երեքշաբթի**	**Չորեքշաբթի**	**Հինգշաբթի**	**Ուրբաթ**	**Շաբաթ**	**Կիրակի**
29.06.2025 թ.	**30.06.2025 թ.**	**01.07.2024 թ.**	**02.07.2024 թ.**	**03.07.2024 թ.**	**04.07.2024 թ.**	**05.07.2024 թ.**	**06.07.2024 թ.**
Հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից մրցաձևի մասնակիցների մանդատ	Հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից մրցաձևի մասնակիցների զենքի նշանազարկի բերում	Հրաձգություն «ԱԿ 103» ինքնաձիգից մրցաձևի մրցումներ					
	Հրաձգություն «ԴԴՀ» հրացանից մրցաձևի մասնակիցների մանդատ	Հրաձգություն «ԴԴՀ» հրացանից մրցաձևի մասնակիցների զենքի նշանազարկի բերում	Հրաձգություն «ԴԴՀ» հրացանից մրցաձևի մրցումներ				
		Հրաձգություն «ՊՄ» ատրճանակից մրցաձևի մասնակիցների մանդատ	Հրաձգություն«ՊՄ» ատրճանակից մրցաձևի մասնակիցների զենքի նշանազարկի բերում	Հրաձգություն «ՊՄ» ատրճանակից մրցաձևի մրցումներ			
		Ռազմ. քառամարտ մրցաձևի մասնակիցների մանդատ	Ռազմ. քառամարտ մրցաձևի մրցումներ	Ռազմ. քառամարտ մրցաձևի մրցումներ			
Կողմնորոշում մրցաձևի մասնակիցների մանդատ	Կողմնորոշում մրցաձևի մասնակիցների մրցումներ						
				Ռազմականացված կրոսավազք մրցաձևի մասնակիցների մանդատ	Ռազմականացված կրոսավազք մրցաձևի մասնակիցների մրցումներ	Ռազմականացված կրոսավազքի փոխանցումավազք մրցաձևի մրցումումներ	Պարգևատրում և փակման արարողություն